

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարչական վերահսկողության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասության սահմաններում ապահովում է Նախարարությանը իրավական և մասնագիտական հսկողության բնագավառում վերապահված գործառնությունների իրականացումը, ինչպես նաև հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործառնությունների իրականացումը:

Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքներով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

2. Վարչության կանոնադրությունը, ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:
3. Վարչության ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

## II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Վարչության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

- 1) Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը.
- 2) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված հսկողության արդյունքների մշտադիտարկումը.
- 3) Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառի օրենսդրությամբ նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում վերահսկողության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովում.
- 4) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի հաստատումը.
- 5) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերում չընդգրկված համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու վերաբերյալ գրավոր համաձայնության տրամադրում.
- 6) Պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինների կողմից համայնքներում իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալը.
- 7) Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության նկատմամբ վերահսկողությունը.
- 8) Մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ իրավական հսկողության իրականացումը.
- 9) իրավական և մասնագիտական հսկողության ամբողջականությունն ու դրա իրականացման միատեսակնացումը.

10 ) համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների ու համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության ապահովում.

### III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1.Վարչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար կատարում է հետևյալ գործառնությունները.

1) Տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն իրականացնելը.

2) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված հսկողության արդյունքների մշտադիտարկումը.

3) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի ուսումնասիրությունը և դրանց հաստատման վերաբերյալ Նախարարին առաջարկությունների ներկայացումը.

4) Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

5) Տարածքային կառավարման մարմինների կողմից իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերում չընդգրկված համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությանը գրավոր համաձայնություն տալու վերաբերյալ Նախարարին առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև հսկողության իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

6) Պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինների կողմից համայնքներում իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալու հարցերի ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ Նախարարին առաջարկությունների ներկայացումը.

7) Մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ իրավական հսկողության իրականացումը և, անհրաժեշտության դեպքում, առաջարկությունների նախապատրաստումն ու զեկուցումը Նախարարին.

8) Իրավական և մասնագիտական հսկողության բնագավառին առնչվող` Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված

կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված համապատասխան իրավական ակտերի մասին առաջարկությունների նախապատրաստումը.

9) Տարածքային կառավարման մարմինների կողմից կատարված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, ինչպես նաև տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ընթացիկ տեղեկությունների և հաշվետվությունների վերլուծումն ու ամփոփումը.

10) Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառի պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցությունը.

11) Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառի օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում վերահսկողության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովում.

12) Մասնավոր գերեզմանատների շահագործման համար թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանման նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.

13) Գերեզմանի տրամադրման և սպասարկման պայմանագրերի, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.

14) Տեղական ինքնակառավարման մարմնի պահանջով Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով խորհրդատվության տրամադրումը.

15) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերի հետ կապված պաշտոնական պարզաբանումների նախագծերի նախապատրաստումը.

16) Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար անհրաժեշտ տեղեկատվական-վերլուծական նյութերի մշակումը և տրամադրումը համապատասխան ստորաբաժանմանը.

17) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկումների կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում համայնքներում համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը.

18) Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարության իրականացումը.

19) ՀՀ կառավարության կամ ՀՀ վարչապետի որոշումներով Նախարարության ներգրավմամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը.

20) Նախարարության խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով այլ գործառույթների իրականացումը:

#### IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

2. Վարչությունը կառավարում է Նախարարը:

3. Վարչության աշխատանքները համակարգում և ղեկավարում է Նախարարը:

4. Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը, որը քաղաքացիական ծառայող է: Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

6. Վարչության պետը հաշվետու է Նախարարին:

7. Վարչության պետը՝

1) ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

3) պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Նախարարին և Գլխավոր քարտուղարին՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

4) Նախարարի կամ Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ դատական ատյաններում ներկայացնում է նախարարության շահերը.

5) Ներկայացնում է առաջարկություններ Նախարարին կամ Գլխավոր քարտուղարին՝ Վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ.

6) Ապահովում է Նախարարի հրամանների և ցուցումների, ինչպես նաև Գլխավոր քարտուղարի՝ ցուցումների, հանձնարարականների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է այդ պաշտոնատար անձանց.

7) Համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

8) Ընդունում է Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության արդյունքները.

9) Սահմանում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև.

10) Գլխավոր քարտուղարին է ներկայացնում վարչության աշխատանքային ծրագրերը.

11) Ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը,

12) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

13) Վարչության առջև դրված գործառնությունների և խնդիրների իրականացման հետ կապված՝ Գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ, դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

14) Նախարարի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

15) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8. Վարչության պետի և Վարչության քաղաքացիական ծառայողների իրավունքները և պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների պաշտոնների անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

9. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Վարչության բաժինների պետերից մեկը:

**V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

10. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

11. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները.

1) Վարչական վերահսկողության իրականացման բաժին.

2) Վարչական վերահսկողության մշտադիտարկման բաժին:

12. Վարչական վերահսկողության իրականացման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) Տեղական ինքնակառավարման լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն իրականացնելը.

2) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերի ուսումնասիրությունը և դրանց հաստատման վերաբերյալ վարչության պետին առաջարկությունների ներկայացումը.

3) Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

4) Տարածքային կառավարման մարմինների կողմից իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագրերում չընդգրկված համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությանը գրավոր համաձայնություն տալու վերաբերյալ վարչության պետին առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև հսկողության իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

5) Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինների կողմից համայնքներում իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալու հարցերի ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ վարչության պետին առաջարկությունների ներկայացումը.

6) Իրավական և մասնագիտական հսկողության բնագավառին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված համապատասխան իրավական ակտերի մասին առաջարկությունների նախապատրաստումը.

7) Մարզպետների ընդունած որոշումների նկատմամբ իրավական հսկողության իրականացումը և, անհրաժեշտության դեպքում, առաջարկությունների նախապատրաստումն ու զեկուցումը Նախարարին.

8) Տեղական ինքնակառավարման մարմնի պահանջով Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով խորհրդատվության տրամադրումը.

- 9) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերի հետ կապված պաշտոնական պարզաբանումների նախագծերի նախապատրաստումը.
- 10) Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար Բաժնի մասով անհրաժեշտ տեղեկատվական-վերլուծական նյութերի մշակումը և տրամադրումը համապատասխան ստորաբաժանմանը.
- 11) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկումների կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում համայնքներում համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը.
- 12) Նախարարության ներգրավմամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը.
- 13) Նախարարության խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով այլ գործառույթների իրականացումը:
- 14) Վարչական վերահսկողության իրականացման բաժինը ղեկավարում է բաժնի պետը, որը քաղաքացիական ծառայող է և պաշտոնի նշանակվում ու պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 15) Վարչական վերահսկողության իրականացման բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ բաժնի գլխավոր մասնագետը:
- 13. Վարչական վերահսկողության մշտադիտարկման բաժինը,** Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝
- 1) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված հսկողության արդյունքների մշտադիտարկումը և արդյունքների ներկայացումը վարչության պետին.
- 2) Տեղական ինքնակառավարման մարմնի պահանջով Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով խորհրդատվության տրամադրումը.
- 3) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության ամենամյա աշխատանքային ծրագիրը կազմելու նպատակով առաջարկությունների ներկայացումը.
- 4) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերի հետ կապված պաշտոնական պարզաբանումների նախագծերի նախապատրաստումը.



- 5) Նախարարության պաշտոնական կայքի սպասարկման համար Բաժնի մասով անհրաժեշտ տեղեկատվական-վերլուծական նյութերի մշակումը և տրամադրումը համապատասխան ստորաբաժանմանը.
- 6) Վարչությանը վերապահված բնագավառներին առնչվող հարցերով քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկումների կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում համայնքներում համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը.
- 7) Նախարարության ներգրավմամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցությունը.
- 8) Տարածքային կառավարման մարմինների կողմից կատարված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, ինչպես նաև տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ընթացիկ տեղեկությունների և հաշվետվությունների վերլուծումն ու ամփոփումը.
- 9) Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառի պետական քաղաքականության մշակմանը և իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցությունը.
- 10) Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման բնագավառի օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում վերահսկողության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովում.
- 11) Մասնավոր գերեզմանատների շահագործման համար թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների և պահանջների սահմանման նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.
- 12) Գերեզմանի տրամադրման և սպասարկման պայմանագրերի, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանների տիպային ձևերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցություն.
- 13) Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարության իրականացումը.
- 14) Վարչական վերահսկողության մշտադիտարկման բաժինը ղեկավարում է բաժնի պետը, որը քաղաքացիական ծառայող է և պաշտոնի նշանակվում ու պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 15) Վարչական վերահսկողության իրականացման բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ բաժնի գլխավոր մասնագետը: